# Ազդարարության փող

# Trumpet's Sound

49-ՐԴ ՏԱՐԻ, ԱՎԱՏՐԱԼԻԱ
ՆՈՅԵՄԲԵՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ 2018

# Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցի
# ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH

BI MONTHLY CHRISTIAN PUBLICATION
PUBLISHED BY THE
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
112 SAILORS BAY ROAD, NORTHBRIDGE,
NSW 2063 Australia

PASTOR HRATSH KIUJIAN
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
PO BOX 1593, CHATSWOOD NSW 2057
email: pastor@armenianbrethren.org
URL: www.acmaust.org

«ԱԶԴԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՂ» երկամսյա թերթը Սիդնեյի Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցու հրատարակությունն է: Պատասխանատու խմբագիր՝ հովիվ Հրաչ Գույուճյան:

Այս թերթը անվճար բաժանվում է հայրենիքում: Յանկացողները կարող են դիմել նշված հասցեով:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սուրբ Ծնունդը՝ տալու ժամանակը ..... Հովիվ՝ Հրաչ Գույուճյան

Գնացե՛ք... և ավետարանը քարոզե՛ք (2) ..... Մանկանց ավետ. ընկ.

Մելքիսեդեկն օրհնում է Աբրամին ..... Դոն Սթորմըր

Օրը օրին ..... Քաղված

Եկեղեցու պատմությունը (3) ..... QMBC պանորամա

Հրավիրված եք խրախճանքի..... Ռեքս Տիրլավ

Ապաշխարություն առանց պայմանների ..... Հովիվ՝ Ռաֆֆի Զափարյան

Ինչո՞ւ չենք կարող համակերպվել միմյանց հետ ..... Դոկտ. Զեսլո Բասսարա

Խաղաղության իշխան ..... Վեր. Ջոն Մելքոնյան

Ատաղձագործը ..... Քաղված

Եկե՛ք շարունակենք..... Հովիվ՝ Հովսեփ Հովսեփյան

Հացի մեջ պահած Աստվածաշունչը..... Քաղված

# Սուրբ Ծնունդը՝ տալու ժամանակը

Այցելե՛ք առևտրի կենտրոններ և ձեզ համար շուտով պարզ կդառնա, որ եկել է տարվա այն ժամանակը, երբ նվերներ ենք ստանում ու նվիրում: Մեր բնակարաններն արդեն լի են այնպիսի բաներով, որոնց կարիքը չունենք: Սակայն երեխաները, նվերներ տալով, սիրում են զարմացնել իրենց ծնողներին: Ձմեռ պապն ուզում է նվերներ բերել, տատիկն ու պապիկը շփոթված են և չգիտեն, թե ինչ գնել և ում համար: Երբեմն մեկին մոռանում ենք և ամաչում, քանի որ ցանկում չէինք ներառել: Հիսուսը բոլոր քրիստոնյաներին սովորեցնում է տալու՝ աղքատներին տալու մասին: Սա քրիստոնեական հիմնական վարժանք է:

1. «Եվ Նա Իր աչքերը բարձրացրեց դեպի Իր աշակերտներն ու ասաց. «Երանի՜ աղքատներիդ, որովհետև ձերն է Աստծո թագավորությունը: Երանի՜ ձեզ, որ հիմա քաղցած եք, որովհետև պիտի կշտանաք: Երանի՜ ձեզ, որ հիմա լալիս եք, որովհետև պիտի ծիծաղեք» (Ղուկ. 6:20-21):

Աղքատությունը համաշխարհային խնդիր է ոչ միայն աղքատների, այլև ձեզ և ինձ համար: Ե՞րբ պետք է օգնենք: Ինչպե՞ս պետք է օգնենք: Որքա՞ն պետք է օգնենք: Հիսուսն ասել է. «Որովհետև աղքատներին միշտ ձեզ հետ ունեք»: Մենք պետք է հոգ տանենք, մեր հացը կիսենք ու հասնենք կարոտյալներին: Այս Սուրբ Ծնունդին արդյոք օգնելո՞ւ եք աղքատներին:

2. «Այն ժամանակ Թագավորը կասի Իր աջ կողմում եղողներին. «Եկե՛ք, Իմ Հոր կողմից օրհնվածներ, ժառանգե՛ք աշխարհի հիմնադրումից ձեզ համար պատրաստված թագավորությունը, որովհետև սոված էի, և Ինձ ուտելիք տվիք, ծարավ էի, և Ինձ խմելիք տվիք, օտարական էի, և Ինձ ներս առաք, մերկ էի, և հագցրիք Ինձ, հիվանդ էի, և այցելեցիք Ինձ, բանտում էի, և Ինձ մոտ եկաք» (Մատթ. 25:34-36):

Տալը Երկնքից տրված շնորհք է: Ոմանք չեն կարողանում կիսվել իրենց հարստությամբ, իսկ ուրիշները երջանիկ են, երբ իրենց ունեցվածքով օգնում են ուրիշին: Վերջին անգամ ե՞րբ եք գումար նվիրել մի աղքատի: Հիշում եմ Միջին Արևելքից Ավստրալիայում հաստատված մի տարեց տիկնոջ, ով մեր եկեղեցի կանոնավոր հաճախողներից մեկն էր: Մի օր պաշտամունքից հետո մոտեցավ ինձ՝ իր ձեռքում ունենալով խնամքով փաթաթված թաշկինակ, ու ասաց. «Ես ծեր կին եմ, որդուս հետ եմ ապրում ու եկամուտի աղբյուր չունեմ: Երբեմն թոռնիկներս խաղում են մետաղադրամներով, գորգի վրա ահա այս մետաղադրամները գտա»: Նա ուզում էր, որ վերցնեի դրանք, որ մեծ արժեք չունեին: Դրանք այն ամենն էին, ինչ ուներ: Այս Սուրբ Ծնունդին արդյոք օգնելո՞ւ եք աղքատներին:

3. «Հիսուսն էլ նայեց նրան, սիրեց նրան ու ասաց. «Մի բան է քեզ պակասում, գնա՛, ինչ որ ունես ծախի՛ր և տուր աղքատներին ու երկնքում վարձ կունենաս և ե՛կ, խաչը վերցրո՛ւ և Ինձ հետևիր»: Եվ նա տխրեց այդ խոսքից ու վշտացած գնաց, որովհետև շատ հարստություն ուներ» (Մարկ. 10:21-22):

Վերոհիշյալ հատվածը նկարագրում է շատ սրտաճմլիկ պատմություն մի երիտասարդի մասին, ով դեմ առ դեմ հանդիպեց Տեր Հիսուսին և հեռացավ Նրանից իր դրամասիրության պատճառով: Հիսուսը նրան չասաց, որ մուրացկան դառնա կամ փողոցներում պառկի, այլ կիսվի իր ունեցվածքով, քանի որ բավականաչափ հարստություն ունի և կարող է ունեցածը ծախել ու աղքատներին տալ: Այսօր շատ եկեղեցիներ միևնույն խնդրով են տառապում: Նրանք հարստացնում են իրենք իրենց ու անտեսում աղքատներին: Այս Սուրբ Ծնունդին արդյոք օգնելո՞ւ եք աղքատներին:

4. «Հիսուսը գանձանակի մոտ նստած դիտում էր, թե ինչպես է ժողովուրդը դրամ գցում գանձանակի մեջ: Եվ շատերը, որ հարուստ էին, շատ էին գցում: Եվ մի աղքատ որբևայրի եկավ ու երկու լումա գցեց, որը մեկ գրոշ է: Նա աշակերտներին կանչեց Իր մոտ և ասաց նրանց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ այս աղքատ որբևայրին ավելի շատ գցեց գանձանակի մեջ, քան մյուս բոլոր գցողները. որովհետև բոլորն էլ իրենց ավելցուկից

գցեցին, մինչդեռ սա, իր չքավոր վիճակում, գցեց իր բոլոր ունեցածը՝ իր ամբողջ ապրուստը» (Մարկ. 12:41-44):

Աստված թերևս մեր ամեն ունեցածը չպահանջի, բայց կպահանջի մեր լավագույնը՝ ուրիշներին օգնելու համար: Մենք համապատասխան վարձք ենք ստանալու. որքան շատ տանք, այնքան շատ կստանանք թե՛ երկրի վրա, թե՛ Երկնքում: Այս Սուրբ Ծնունդին արդյոք օգնելո՞ւ եք աղքատներին:

5. «Իսկ Իրեն հրավիրողին էլ ասաց. «Երբ ճաշ կամ ընթրիք ես պատրաստում, մի՛ կանչիր բարեկամներիդ, եղբայրներիդ, ազգականներիդ և ոչ էլ հարուստ հարևաններիդ: Չլինի թե փոխարենը նրանք էլ քեզ հրավիրեն և քեզ հատուցում լինի: Այլ, երբ հացկերույթ անես, կանչի՛ր աղքատներին, խեղանդամներին, կաղերին և կույրերին: Ու երանելի կլինես, քանի որ փոխարենը հատուցելու ոչինչ չունեն. քո հատուցումը կստանաս արդարների հարության ժամանակ» (Ղուկ. 14:12-14):

Աղքատներին օգնել կարելի է տարբեր ձևերով: ԱՍՄ-ն Հայաստանում իր ծառայության տարիների փորձի շնորհիվ գտել է, որ կարիքները բազմազան են՝ բժշկական օգնություն, ձմեռվա վառելափայտ, սննդամթերք, Նոր տարվա նվերներ կարիքավոր երեխաների համար և այլն: Այս Սուրբ Ծնունդին արդյոք օգնելո՞ւ եք աղքատներին:

6. «Մի մեծահարուստ մարդ կար, որ ծիրանի ու բեհեզ էր հագնում և ամեն օր փառավոր խնջույք անում: Եվ մի մուրացկան կար Ղազարոս անունով, որը վերքերով ծածկված, ընկած էր նրա դռան առջև: Եվ նա ցանկանում էր կերակրվել հարուստի սեղանից ընկած փշրանքներով, և շները գալիս էին ու լիզում նրա վերքերը: Եվ եղավ, որ աղքատը մեռավ, ու հրեշտակները նրան տարան Աբրահամի գոգը: Հարուստն էլ մեռավ ու թաղվեց: Եվ դժոխքում՝ տանջանքների մեջ, աչքերը բարձրացրեց և հեռվում տեսավ Աբրահամին՝ Ղազարոսն էլ նրա գոգին: Եվ նա աղաղակեց ու ասաց. «Հա՛յր Աբրահամ, ողորմի՛ր ինձ և Ղազարոսին ուղարկիր, որ իր մատի ծայրը թաթախի ջրի մեջ ու զովացնի լեզուս, որովհետև տանջվում եմ այս բոցի մեջ»:

Աբրահամն էլ ասաց. «Որդյա՛կ, հիշի՛ր, որ քո կյանքում դու վայելեցիր ամեն բարիք, ինչպես Ղազարոսը՝ չարիքները: Իսկ հիմա նա այստեղ մխիթարություն գտավ, իսկ դու՝ տանջվում ես» (Ղուկ. 16:19-25):

Անշուշտ, կարող եք ձեր գրպանի փշրանքները տալ. շատ աղքատներ կան, որոնք կարող են օգտվել դրանցից: Նրանք կօրհնեն ձեզ, ու Աստված կվարձատրի ձեզ, եթե այս Սուրբ Ծնունդին ուզեք օգնել աղքատներին:

7. «Եվ Նա առակով խոսեց նրանց հետ ու ասաց. «Մի հարուստ մարդու արտն առատ բերք տվեց: Նա ինքն իրեն մտածում էր ու ասում. «Ի՞նչ անեմ, տեղ չունեմ, որ բերքս ամբարեմ»: Եվ նա ասաց. «Այսպես կանեմ. կքանդեմ շտեմարաններս և ավելի մեծերը կշինեմ ու այնտեղ կամբարեմ իմ ամբողջ բերքն ու բարիքը: Եվ իմ անձին կասեմ. «Ո՛վ անձս, երկար տարիների համար շատ բարիքներ ունես ամբարած, հանգի՛ստ արա, կե՛ր, խմի՛ր ու զվարճացի՛ր»: Բայց Աստված նրան ասաց. «Անմի՛տ, այս գիշեր հոգիդ քեզնից պիտի պահանջվի: Հետո ո՞ւմ պիտի մնա այս քո պատրաստածը»: Այսպես էլ նա, ով իր անձի համար գանձեր է դիզում, բայց Աստծո հանդեպ հարուստ չէ»: (Ղուկ. 12:16-21):

Աստված Իր լավագույնը տվեց՝ Իր միածին Որդուն՝ Տեր Հիսուս Քրիստոսին աշխարհ ուղարկելով: Սուրբ Ծնունդի ամբողջ իմաստը Աստծո՝ Իր Որդուն մարդկության փրկության համար աշխարհ ուղարկելու մեջ է: Աստված չերկմտեց: Նա սիրեց մեզ, երբ դեռ մեղավոր էինք: Մարդկության փրկության համար մեր Տերը չհապաղեց Երկնքի փառքը թողնել և Իր կյանքը տալ: Նա ծնվեց մսուրում՝ թողնելով Երկնքի ողջ փառքը:

Արդյոք քո սիրտը Հիսուսին կտա՞ս այս Սուրբ Ծնունդին: Կուզե՞ս դառնալ Նրա զավակը:

ԱՍՄ-ի և «Ազդարարության փող»-ի ծառայակիցների անունից մաղթում ենք մեր ընթերցողներին օրհնյալ Սուրբ Ծնունդ և Նոր տարի: Թող Աստված օրհնի՛ ձեզ:

Հ .Գ.

# Գնացե՛ք... և ավետարանը քարոզե՛ք

## Մաս 2

### ❑ Ի՞նչ է Տերն ուզում, որ ասեմ:

Մարկ. 16:15-ում Տեր Հիսուսը պատվիրում է քարոզել Ավետարանը և Ղուկաս 24:45-47 համարներում Նա կրկնում է Մեծ հանձնարարականը, բայց այս անգամ ավելի մանրամասն է նշում, թե ինչ պետք է ասես, երբ քարոզում ես Ավետարանը:

Այն ժամանակ նրանց միտքը բացեց, որ Գիրքը հասկանան: Եվ ասաց նրանց. «Այսպես է գրված ու այսպես Քրիստոսը պետք է չարչարվեր և երրորդ օրը մեռելներից հարություն առներ, և որ Նրա անունով ապաշխարություն և մեղքերի թողություն քարոզվեր ազգերի մեջ՝ Երուսաղեմից սկսած»:

Այս երեք համարները Ավետարանի մասին ամենաստույգ և ամենաամփոփիչ պնդումներից են, որ նշված են Նոր Կտակարանում: Այն բաղկացած է երեք մասից:

### ❑ Ավետարանի փաստերը

Բանալի փաստերը կամ ճշմարտությունները տրված են այստեղ.

- Աստծո խոսքի կարևորությունը՝«այսպես է գրված»:
- Տեր Հիսուսի մահը՝ «այսպես Քրիստոսը պետք է չարչարվեր»:
- Հիսուս Քրիստոսի հարությունը՝ «և երրորդ օրը մեռելներից հարություն առներ»:

### ❑ Ավետարանի պատվերը՝ «ապաշխարություն և մեղքերի թողություն քարոզվեր»

Աշակերտներին ինչպես նաև մեզ՝ որպես նրանց հետնորդների, պատվեր է տրված՝ քարոզել ապաշխարություն, որ մեղավորները պետք է շրջվեն իրենց մեղքերից ու մեղավոր ճանապարհներից և դառնան Քրիստոսին: Ապաշխարությունը շրջադարձ է դեպի վերափոխում: Մեղավորները միայն հավատքի միջոցով են փրկվում, բայց ճշմարիտ հավատքը մարդուն տանում է ապաշխարության:

## ❑ Ավետարանի խոստումը

Ապաշխարելը և Քրիստոսին վստահելը կտանի փրկության և շատ օրհնություններ կբերի: Դրանցից ամենամեծը գտնվում է այս պատվերի մեջ՝ «մեղքերի թողություն»: Այն մեղավորը, ով ապաշխարում և վստահում է Քրիստոսին, ներում է ստանում ներկայի, անցյալի և ապագայի մեղքերից:

Ահա թե ինչպիսի պատգամ պետք է լսեն երեխաները, նաև չափահասները: Եվ Տեր Հիսուսը շեշտել է, որ «Իր անունով ապաշխարություն և մեղքերի թողություն քարոզվեր ազգերի մեջ»:

## ❑ Ինչպե՞ս պետք է քարոզեմ

«Ուրեմն, գնացեք ու սովորեցրեք բոլոր ազգերին՝ նրանց մկրտելով Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով: Սովորեցրեք նրանց, որ պահեն այն ամենը, ինչ Ես ձեզ պատվիրեցի: Եվ ահա Ես ձեզ հետ եմ մինչև աշխարհի վերջը. Ամեն»:

Այս համարները նշում են միսիոներության մեթոդները, որոնք պետք է օգտագործես ավետարանելիս: Պատվերը առաջին հերթին հետևյալն է. «Ուրեմն, գնացեք ու սովորեցրեք»: Պատգամն ամփոփված է այս խոսքերի մեջ. «Սովորեցրեք նրանց, որ պահեն այն ամենը, ինչ Ես ձեզ պատվիրեցի»:

Ավետարանչությունն ուղղված է նրանց, ովքեր շատ քիչ բան գիտեն Տեր Հիսուսի և Ավետարանի մասին: Բավարար չէ պարզապես ինչ-որ բան ասել նրանց: Այս համարները պարզ ասում են, որ

- Պետք է աշակերտներ պատրաստես՝ սովորեցնելով. «Ուրեմն, գնացեք ու սովորեցրեք»:
- Հետո պետք է սովորեցնես նրանց, «որ պահեն այն ամենը, ինչ Ես ձեզ պատվիրեցի»:

Աստված կանչում է քեզ և պատվիրում՝ սովորեցնել. լինել Իր Խոսքի և Ավետարանի լավ ուսուցիչ, սովորեցնող ավետարանիչ:

Մանկանց ավետարանչության ընկերակցություն

# Մելքիսեդեկն օրհնում է Աբրամին

## Կարդացե՛ք Ծննդոց 14-րդ գլուխը

Աբրահամի և Ղովտի միջև հակադրությունը շարունակվում է: Ղովտի խնդիրներն ավելի շատացան քչանալու փոխարեն: Հաւանաբար նա մտածեց, որ Հորդանանի հովիտ տեղափոխվելն իր կյանքը կհեշտացնի և այլևս ստիպված չի լինի միջամտել իր հովիվների և հորեղբոր՝ Աբրահամի հովիվների միջև ծագած վեճերին: Բայց նա սկսեց Սոդոմին ավելի մոտենալ, մինչև որ ի վերջո բնակություն հաստատեց այնտեղ:

Հորդանանի հովտի մի քանի թագավորներ տուրք էին տալիս Արևելքի թագավորին: Նրանք 12 տարի շարունակ այդպես էին անում և 13-րդ տարում ապստամբեցին: 14-րդ տարում Արևելքի չորս թագավորները հարձակվեցին մեծ տարածքի վրա, որպեսզի վերականգնեն իրենց կորցրած վերահսկողությունը և ամրացնեն դիրքերը իրենց հարկատու դարձնող թագավորի նկատմամբ: Ծննդոց 14-րդ գլուխը ներկայացնում է պատերազմի մանրամասները: Սոդոմի և Գոմորի թագավորներն իրենց տարածքները պաշտպանելու ժամանակ խայտառակ պարտություն կրեցին: Չնայած որ նրանց զինվորները պետք է տարածքը լավ իմանային, սակայն տեսնում ենք, որ նրանք ընկան նավթով լի հորերի մեջ, որոնք բավական շատ էին այնտեղ: Արևելքի թագավորները Սոդոմի ու Գոմորի ամբողջ ունեցվածքը, մարդկանց ու բոլոր պաշարները վերցրին ու գնացին:

Մարտի դաշտից փախած մի փախստական գնաց Աբրահամի մոտ, որպեսզի հաղորդի նրա եղբորորդի Ղովտի գերության լուրը: Այստեղ տեսնում ենք Աբրահամի հոգածության լավագույն դրսևորումը: Եթե Աբրահամի փոխարեն ուրիշ մարդ լիներ, հավանաբար մտածեր, թե այլևս ոչինչ անել հնարավոր չէ: Ինքն ո՞վ էր, որ համարձակվեր հարձակվել հաղթող՝ հատկապես Արևելքի թագավորների վրա: Բացի այդ՝ չէ՞ որ Ղովտն ինքն էր ընտրել այդ ճանապարհը: Նա տեսավ Հորդանանի հովիտը և որոշեց այնտեղ ապրել: Եթե ինչ-որ բան սխալ ընթացք ստացավ, ապա դրա պատճառը սխալ որոշումն էր: Բայց Աբրահամը երբեք այդպես չմտածեց:

Աբրահամը հավաքեց ավելի քան 300 կրթված ծառա: Սա ցույց է տալիս նրա կազմակերպչական բարձր հմտությունը, ինչպես նաև հեռատեսությունը, քանի որ նախքան որևէ անակնկալ իրադարձության հանդիպելը ամեն բան կարգադրել էր: Աբրահամը նման զորքի համար առնվազն երեք կամ չորս հրամանատարի կարիք կունենար: Այս տղամարդկանց կրթելու համար անհրաժեշտ էր հմտություն ու գիտելիք: Ձենք ունենալն ու կարճ ժամանակում մարդկանց զինելը վկայում են Աբրահամի խորաթափանցության, կարողության ու նախապատրաստության մասին:

Աբրահամն իր ռազմավարական հմտությունները ցույց տվեց, երբ իր մարդկանց առաջնորդեց պատերազմում: Նա իր զորքը գնդերի բաժանեց և գիշերով հարձակվեց թշնամու վրա ու հարվածեց նրանց՝ քշելով մինչև Քոբա, որ Դամասկոսի հյուսիսային կողմում է: Աբրահամը ետ բերեց ամբողջ բարիքը, նաև իր ազգականին՝ Ղովտին, նրա ունեցվածքը, կանանց և մյուս մարդկանց:

Աբրահամը հաղթանակ տարավ իրենից ավելի մեծ բանակի դեմ: Երբ մտածում ենք մեր առջև դրված փորձության մասին, երկու հնարավոր վտանգ ենք հաշվի առնում: Մի կողմից՝ Աբրահամը կարող էր ֆիզիկապես սպառված ու խոցելի լինել, իսկ մյուս կողմից՝ շատ ավելի ինքնավստահ իր հաջողության համար և խոցելի՝ որևէ փորձության ժամանակ: Բայց Աստված նախապատրաստեց նրան գալիք փորձության համար՝ ուղարկելով քահանա-թագավոր Մելքիսեդեկին նախքան Սոդոմի թագավորին հանդիպելը:

Մելքիսեդեկը՝ բարձրյալ Աստծո քահանան և Սաղեմի թագավորը, հացով ու գինիով դուրս եկավ՝ Աբրահամին դիմավորելու: Նեեմիա 5:15-ից հասկանում ենք, որ հացը և գինին թագավորին վճարած հարկի տեսակ էր: Այստեղ թագավորը հացն ու գինին Աբրահամին տվեց: Թագավոր-քահանան միևնույն ժամանակ օրհնեց Աբրահամին՝ որպես երկնքի ու երկրի Տիրոջ, բարձրյալ Աստծո ծառայի: Աբրահամը զորություն ստացավ գալիք փորձության համար: Միևնույն ժամանակ Մելքիսեդեկը գովաբանեց Աստծուն՝ Աբրահամի թշնամիներին նրա ձեռքը մատնելու համար:

Երբ Սոդոմի թագավորն Աբրահամին առաջարկեց միայն մարդ-

կանց վերադարձնել, իսկ բարիքներն իրեն պահել, Աբրահամը պատրաստ էր դիմակայել այդ փորձությանը: Նրա կտրուկ ու հստակ պատասխանն արտացոլում էր Մելքիսեդեկի օրհնության մեծությունը, երբ ասաց, որ երկնքի ու երկրի Տիրոջը բարձրացրեց իր ձեռքերը, և Սոդոմի թագավորի՝ իրեն առաջարկած թելից մինչև կոշիկի կապը ոչինչ չէր վերցնելու, որպեսզի թագավորը չասեր, թե Աբրահամին ինքը հարստացրեց:

Բոլորիս կյանքում փորձության ժամանակներ են գալիս: Եթե ուզում ենք հաստատուն կանգնել, ապա մեր մեծ Քահանայապետի ծառայության կարիքն ունենք: Մենք ունենք քահանայապետ՝ Հիսուսը՝ Աստծո Որդին, ով հասկանում է մեզ ու մեր կարիքները: Եբրայեցիներին ուղղված նամակի հեղինակը Հիսուսին այդ տիտղոսով ներկայացրեց, որպեսզի մեր ուշադրությունը հրավիրի Քահանայապետի բնության վրա, քանի որ «Հիսուս» անունը Նրան տրվեց, երբ մարդ դարձավ, իսկ «Աստծո Որդի» տիտղոսը հավիտենից Նրան տրված տիտղոսն է: Տեր Հիսուսը մարդ դարձավ և փորձառեց բոլոր այն բաները, որոնք հատուկ են մարդկանց: Նա փորձվեց ամեն կերպ, բայց մեղք չգործեց: Այս ամենը նշանակում է, որ Նա գիտի այն ամենը, ինչ զգում ենք, բայց քանի որ Ինքն Աստված է, մեծ զորություն ունի՝ օգնելու մեզ, երբ փորձություններ ենք դիմագրավում: Ուստի համարձակությամբ մոտենանք շնորհաց աթոռին, որպեսզի ողորմություն ընդունենք ու շնորհք գտնենք:

Մելքիսեդեկը հանդիպեց Աբրահամին, երբ վերջինս գաղափար անգամ չուներ, թե ինչի է հանդիպելու: Աստծո քահանայապետն այնտեղ էր նախքան փորձությունը դիմագրավելը: Մենք կարող ենք երախտապարտ լինել, որ մեր Քահանայապետը գիտի մեր դժվարությունների արդյունքը, նույնիսկ նախքան դրանց հանդիպելը: Նա միշտ պատրաստ է օգնելու: Բայց երկու հարց կա, որոնք պետք է ինքներս մեզ տանք: Արդյոք դժվարությունների հանդիպելիս դիմո՞ւմ ենք Նրան, թե՞ փորձում ենք ինքներս կարգավորել դրանք՝ առանց մեր Քահանայապետի օգնության:

Մենք մեծ Քահանայապետ ունենք, ով մեր փոխարեն ներկայանում է Աստծո առջև: Եկեք մոտենանք Նրան և խոնարհաբար փնտրենք Նրա պաշտպանությունն ու առաջնորդությունը:

# Օրը օրին

Արդյոք լսե՞լ էք այդ ժամացույցի մասին, որը ջղային խանգարում էր ունեցել, երբ մի օր սկսել էր մտածել, թե առաջիկա տարվա ընթացքում քանի անգամ պետք է տիկ-տակ անի: Վայրկյանը երկու տիկ-տակ հաշվելով՝ մեկ րոպեում 120 տիկ-տակ էր անելու, ժամում՝ 7,200, օրում՝ 172,800 և 1,209,600 տիկ-տակ՝ ամեն շաբաթ: Հանկարծ խեղճ ժամացույցը լեղապատառ եղավ, երբ պատկերացրեց, որ հաջորդ 12 ամիսների ընթացքում մոտավորապես 63 միլիոն անգամ տիկտակելու է:

Որքան ավելի խորհեց սրա մասին, այդքան ավելի տագնապեց: Վերջապես այնքան շփոթվեց, որ ջղային խանգարում ստացավ:

Հոգեբույժի առաջ բացելով իր սիրտը՝ ժամացույցը գանգատեց, որ զորություն չունի այդքան տիկտակելու: Բժիշկը պատասխանելով՝ հարցրեց.

- Բայց քանի՞ տիկ-տակ ես անելու յուրաքանչյուր անգամ:

Ժամացույցն ասաց՝ մե՛կ:

- Լա՛վ, ուրեմն պարզապես մեկ անգամ տիկ-տակ արա ու հաջորդի մասին մի՛ մտահոգվիր, - թելադրեց խելացի հոգեբույժը:

- Վստահաբար այդպես անելով, լավ ես աշխատելու:

- Ճիշտ այդպես արեց ժամացույցը և դրանից հետո ուրախությամբ շարունակեց տիկտակել:

Նմանապես՝ Աստծուն ապավինող զավակները պետք է լիովին Տիրոջը հանձնեն իրենց հոգսը: Ապագան վախեցնո՞ւմ է քեզ, կամ բեռդ շատ ծա՞նր է թվում: Վախենո՞ւմ ես նոր տարուց կամ հաջորդող 365 օրերում պատահելիք դեպքերից: Պարզապես Տիրոջից զորություն խնդրիր մեկ օրվա համար, և ինչպես Հիսուսն է պատվիրում. «Վաղվա համար հոգ մի՛ արա»: Միայն մեկ «տիկ-տակ» կամ մեկ քայլ արա և վստահ իմացի՛ր, որ Հիսուսը ձեռքդ կբռնի կյանքիդ ճամփորդության մեջ, հաջողությամբ կավարտես ընթացքդ և կստանաս անթառամ պսակդ:

# Եկեղեցու պատմությունը (3)

## Մ.թ. 100-1517թթ.

Արևելյան եկեղեցին նույնպես ուներ իր խնդիրները՝ իսլամական արշավանքներ, պատկերամարտության (եկեղեցական սրբապատկերները, մոզաիկաներն ու արձանները կործանողները) և մոնոֆիզիտների աճ (Հիսուսի բնության մասին հերետիկոսություն տարածողները):

Տասներորդ դարում Ֆրանսիայում գտնվող վանքերը որոշակի հոգևոր արթնություն բերեցին, և որոշ եկեղեցիներից առաջատար առաջնորդներ դուրս եկան: Այս մարդիկ ուզեցին, որ եկեղեցին պետությունից ազատ գործի և հետևի միայն Աստծո պատվիրաններին: Իհարկե, նրանք դեռևս ենթարկվում էին կղերականությանը և Պապին: Այնուհետև հաջորդական Պապերն իրենք իրենց լրացուցիչ իրավունք վերապահեցին նույնիսկ կայսրեր ու թագավորներ թագադրելու: Այս զարգացումները ի վերջո հանգեցրին Պապերի և քաղաքացիական ուժերի միջև բաց պատերազմի, որոնք տևեցին հարյուրամյակներ շարունակ:

Չնայած չարչարանքներին ու կտտանքներին՝ բազմաթիվ առաջնորդներ առաջ եկան և փորձեցին հոգևոր արթնություն ու բարեփոխումներ բերել եկեղեցական կյանքում: Այստեղ նշում ենք նրանցից միայն երկուսին՝ Բերնարդ Քլերվոսացուն (1090-1153թթ.) և Ֆրանցիսկ Ասսիզեցին (1182-1226թթ.):

Չնայած Բերնարդը ներգրավված էր խաչակրաց արշավանքներից մեկում (ռազմական արշավանք մուսուլմաններից Սուրբ Երկրից վերցնելու համար), սակայն հետագայում նա ուզեց իր կյանքն անցկացնել աղոթքով և ճգնավորությամբ: Նա շեշտում էր Աստծո սերը ու հավատում, որ քրիստոնյաներն Աստծուն ճանաչում են, երբ սովորում են սիրել Նրան: Սակայն նա շատ առումներով մնաց հասարակական գործիչ: 1130թ.-ին նա միջամտեց նոր Պապի ընտրությանը և խաղաղություն հաստատեց Ֆրանսիայի թագավոր Լուիս 7-րդի և նրա ֆեոդալական ենթակաների միջև: Նրա գրությունները

մեծ արժեք են ներկայացնում նույնիսկ այսօրվա քրիստոնյաների համար: Նա շատ օրհներգերի հեղինակ է:

Ֆրանցիսկը իտալացի հարուստ վաճառականի որդի էր, բայց տընից հեռացավ առանց որևէ գումարի: Նա հարուստներից գումար էր խնդրում ու բաժանում աղքատներին: 1210թ.-ին, պապական հավանությամբ նա ստեղծեց մի խումբ, որն անվանեց Ֆրանցիսկյան միաբանություն: Նրանք սկսեցին քարոզել և խնամել աղքատներին ու հիվանդներին: Մի քանի միջազգային առաքելություններից հետո Ֆրանցիսկը հեռացավ Մոնտե Ալվերնայի մենաստան: Նա գրեց մի շարք ստեղծագործություններ, ինչպես նաև օրհներգեր:

12-13-րդ դարերում պապերը շատ հզորացան՝ իրենց ձեռքերում ամուր պահելով հռոմեական եկեղեցու վերահսկողությունը: Նրանք ամբարտավանորեն իրենք իրենց բարձր համարեցին մյուս բոլոր մարդկանցից, այդ թվում կայսրերից և թագավորներից: Նրանք օգտագործեցին արտաքսելու/նզովելու սպառնալիքը, որպեսզի իրենց ենթակա ազգերի իշխանների հնազանդությունն ապահովեն: Նրանք հրահրեցին բազմաթիվ անհաջող խաչակրաց արշավանքներ մինչև 1270թ.՝ փորձելով մուսուլմաններին դուրս հանել Սուրբ Երկրից: Բայց այս բռնի գործողությունները ոչ մի արդյունք չտվեցին:

Առնոլդը՝ հյուսիսային Իտալիայից մի վանահայր, հորդորեց եկեղեցուն պետությանը հանձնել իր ունեցվածքը և վերադառնալ վաղ եկեղեցու աղքատությանը և պարզությանը: Որոշ ժամանակ հաջողություն գտավ, սակայն 1155թ.-ին մահապատժի ենթարկվեց՝ այրվելով:

Հետո ֆրանսիացի հարուստ առևտրական Փիթեր Վալդոն (1140-1218թթ.) շարունակեց ընթացքը: Նա մի մարդ էր, որն անկեղծությամբ ուզում էր հետևել Քրիստոսի ուսմունքին: Սա, իհարկե, կնշանակեր, թե նա պետք է բաժանվեր եկեղեցուց: 1184թ.-ին Հռոմի Պապ Լյուիսոսը III-ը արտաքսեց նրան ու նրա հետևորդներին, սակայն նրանք շարունակեցին տարածել հոգևոր լույսը: Նրանք հայտնի դարձան որպես վալդոնսականներ:

Երբ եկեղեցու հեղինակությանը մարտահրավեր նետվեց բազմաթիվ հակախոհների կողմից, 1233թ.-ին Հռոմի Պապ Գրիգոր IX-ը

հրամանագրեց ինկվիզիցիա, որը ստեղծվեց հերետիկոսների դեմ պայքարելու համար: Այս հերետիկոսները (այսպես կոչված) ենթարկվել էին խոշտանգումների և այլ վայրագությունների, և եթե նրանք մեղավոր ճանաչվեին ինչ-որ հարցում, Գրիգոր IX-ը նրանց հանձնում էր քաղաքացիական իշխանություններին, որպեսզի ցցի վրա այրեն: Այս համակարգը պահպանվեց մինչև 19-րդ դարը:

Վերջապես, ֆրանսիացի մի քանի Պապեր ընտրեցին բնակվել Ֆրանսիայի Ավինիոն քաղաքում: Սա տևեց 72 տարի, որի ընթացքում Ավինիոն և Հռոմ քաղաքների ու դրանց Պապերի միջև ծայրահեղ հակառակություն տիրեց: Մի փուլում երեք թեկնածու կար, որոնցից յուրաքանչյուրը պնդում էր, թե ինքն է Պապը: Այս քաոսի ժամանակաշրջանը հայտնի է որպես Պապական մեծ պառակտում (1378-1417թթ.): Շատերը հիասթափվեցին Հռոմի եկեղեցուց և դուրս եկան դրանից: Նրանք սկսեցին մտածել ազգային եկեղեցիների ձևավորման մասին: Այս իրադարձությունները վերջապես հանգեցրին բողոքական բարեփոխմանը:

## 5. Ռենեսանսը՝ Վերածնունդը (1375-1517թթ.)

Միջնադարի վերջում դասական գրականության, ուսման, արվեստի, երաժշտության, ինչպես նաև ավելի պարզունակ քրիստոնեության համար նոր ոգևորություն առաջացավ: Այս փոփոխությունները ծանոթ են Ռենեսանս անվանումով:

Ջոն Վիքլիֆը (1329-1384թթ.) Անգլիայի Օքսֆորդի համալսարանի առաջատար փիլիսոփա էր: Նա խորապես մտահոգված էր կղերականների մեջ տարածված կաշառակերության և նրանց՝ հասարակ մարդկանց ուսուցանելու ձախողումով: Մահն իր առաջ ունենալով՝ նա ռիսկի է դիմում ու մատնանշում եկեղեցու վարդապետական և գործնական սխալները: Օրինակ՝ նա պնդեց, որ Աստծո և մարդկանց միջև ուրիշ միջնորդի կարիք չկա՝ բացի Հիսուս Քրիստոսից (հմմտ. Ա Տիմ. 2:5):

Չնայած նա մերժվեց իր ուսյալ գործընկերների և եկեղեցական իշխանությունների կողմից, բայց շուտով հավաքեց մի խումբ հետևորդների, որոնց ուղարկեց՝ մարդկանց Աստծո ճշմարտությունները

ուսուցանելու: Այս հետևորդները հայտնի դարձան որպես լոլարդներ: Ի թիվս այլ բաների նրանք հավատում էին, որ Աստվածաշունչը պետք է յուրաքանչյուրին հասանելի լինի իր մայրենի լեզվով: Այդ նպատակով Վիքլիֆը Աստվածաշունչը լատիներենից թարգմանեց իր օրերի անգլերենի, իսկ լոլարդները վերցրին այն և կարդացին ժողովրդի ականջին: Իհարկե, շատ քիչ օրինակներ կային, և մեծ էր այն արագ բազմացնելու մեթոդ գտնելու կարիքը:

Այս կարիքը բավարարվեց տպագրության գյուտով: Յոհան Գուտենբերգը (1400-1468թթ.) մեծապես նպաստեց տպագրության զարգացմանը՝ առաջին անգամ օգտագործելով շարժական տառերը: Ամենահին գիրքը, որը տպագրվել է շարժական տառերի կիրառմամբ, 1455թ.-ի լատիներեն Աստվածաշունչն է:

Վիքլիֆի քայլերին հետևողներից մեկը բոհեմացի Յան Հուսն էր (1374-1415թթ.): Նա իր ուսումն ստացել էր Պրահայի համալսարանում, որտեղ աստվածաբանություն էր ուսումնասիրել, ներառյալ Վիքլիֆի որոշ աշխատություններ: Ավելի ուշ նա նշանակվեց ռեկտոր և քարոզիչ և ավելի շատ ժամանակ տրամադրեց Վիքլիֆի գրություններին: Այդ ժամանակ նա հասկացավ, որ եկեղեցու գլուխը ոչ թե Պապն է, այլ Քրիստոսը, իսկ եկեղեցու անդամները նրանք են, ովքեր ունեն Քրիստոսին իրենց սրտում: Այս և այլ աստվածաշնչյան վարդապետություններ հստակորեն հնչում էին Հուսի կրակոտ քարոզներում, որի արդյունքում բազմաթիվ հոգիներ ճշմարտությունն էին ընդունում: Սակայն մոտակա համալսարանում նրա քարոզները հանգեցրին ուսանողական խռովությունների: Արդյունքում՝ Պրահայի արքեպիսկոպոսը, որը Պապի աջակցությունն էր վայելում, Հուսին արտաքսում է համալսարանից: Որոշ ժամանակ անց՝ 1415թ.-ին, Հուսը կանչվեց ատյանի առաջ՝ պաշտպանելու իր համոզմունքները: Ցավոք, նախքան դրա հնարավորությունն ունենալը նա դարձավ ինկվիզիցիայի զոհ, և քանի որ նա չէր հրաժարվի իր համոզմունքներից, նրան այրեցին խարույկի վրա:

(Շարունակելի)

❋ ❋ ❋

# Հրավիրված եք խրախճանքի

Ինչպե՞ս կարծագանքեիք, եթե Աստված ձեզ խրախճանքի հրավիրեր: Եթե մտածում եք, թե խորթ է այն միտքը, որ Աստված սիրում է խրախճանքը, ուրեմն եկե՛ք այն տոնախմբություն անվանենք: Եթե Աստված ձեզ հրավիրեր տոնախմբության, արդյոք կընդունեի՞ք հրավերը: Խրախճանքները, տոնակատարությունները և խնջույքները կարծես հեռու չեն Աստծո սրտից: Ակնհայտ է, որ Նա սիրում է դրանք: Քրիստոսը պատմեց տոների մասին, Անձամբ մասնակցեց և ուրախություն պարգևեց երիտասարդ մի զույգի՝ նրանց երեկույթը դարձնելով անմոռանալի իրադարձություն: «Սեղանապետը, երբ գինի դարձած ջրի համը առավ...» (Հովհ. 2:9): Անառակ որդու պատմության մեջ տեսնում ենք Հայր Աստծո խորհրդապատկերը, ով ավագ որդուն հրավիրում է տուն՝ խրախճանքին մասնակցելու համար: «...Ուրախ լինենք» (Ղուկ. 15:23): Նաև չմոռանանք Գառնուկի հարսանիքի ընթրիքի մասին. կարծում եմ, որ այն այնպիսի իրադարձություն է, որին Աստված անհամբերությամբ է սպասում: «Երանելի են նրանք, որ կանչված են Գառնուկի հարսանիքի ընթրիքին» (Հայտ. 19:9):

Զարմանում եմ, թե ինչու են մարդիկ մերժում Աստծո տոնակատարության հրավերը, հատկապես երբ հատուկ կերպով են հրավիրված: Դուք կարող եք տեսնել Քրիստոսի առակներում և նույնիսկ այսօր Գառնուկի հարսանիքի ընթրիքի տոնակատարությանը մասնակցելը կարծես թե փափագելի եռանդ չի առաջացնում շատերի մոտ: Կարծում եմ՝ եթե Աստված է տոնակատարությունը կազմակերպողը, ուրեմն այն շատ հիշարժան կլինի: Կարծես թե յուրօրինակություն կա. Աստված ուզում է տոնախմբություն անել, բայց մենք չենք ուզում մասնակցել: Ինչո՞ւ է այդպես:

Այս խնդիրը ցայտուն կերպով նկարագրված է անառակ որդու հոր կերպարի մեջ: Տեսե՛ք, թե ինչպես է նա, կրտսեր որդու տունդարձի տոնակատարության ուրախությունը թողնելով, գնում դառնացած ավագ որդուն աղաչելու, որ ներս մտնի և բոլորի հետ վայելի խրախ-

ճանքը: Հայրը մտահոգված էր ավագ որդու համար, քանի որ նա ուրախություն չուներ իր սրտում: Երբեմն մտածում եմ, թե մեզանից ոմանք ավագ եղբոր պես տառապում են անհանդուրժող ու տրտնջացող կեցվածքից: Երբ միասին հավաքվում ենք երկրպագության համար, Աստված հրավիրում է մեզ՝ տոնելու մեր տուն վերադարձը, նաև Իր առատաձեռնությունը: Բայց կան ժամանակներ, երբ կարծես թե չենք ուզում միանալ տոնակատարությանը, երկրպագությանը: Ի՞նչն է այդպիսի վերաբերմունքի պատճառը: Ո՞րն է սխալը: Ինչո՞ւ ավագ որդին չուզեց միանալ տոնակատարությանը: Լսե՛ք հորն ուղղված կրակոտ խոսքերը, որոնք արտացոլում են իր սրտում տարիներով դիզված խոր վրդովմունքը. «Ահա այսքան տարի է ծառայում եմ քեզ և քո պատվերները երբեք չեմ խախտել, բայց ինձ նույնիսկ մեկ ուլ չտվիր, որ իմ բարեկամների հետ ուրախանայի» (Ղուկ. 15:29): Այլ խոսքով՝ «Ես այնքան շատ բան եմ արել քեզ համար. դու ինձ պարտական ես»:

Հնարավոր է, որ Աստծուն երկար տարիներ ծառայած քրիստոնյաներն իրենց սրտի մութ անկյուններում նույն մտքերն ունենան՝ նույնիսկ չգիտակցելով դա: Դրա պատճառով սրտանց և ուրախությամբ տոնակատարություն և երկրպագություն անելու փափագը մարում է իրենց մեջ: Հայրն ու ավագ որդին տարբեր լեզուներով էին խոսում: Ավագ որդին զայրույթով էր խոսում իր արածների և դրանց դիմաց հոր պարտքի մասին: Սա իրավական պայմանագիր կազմողի լեզուն է, որն իր իրավունքը ոտնահարած է համարում: Նա կարծում էր, թե իր կատարածները որոշակի իրավունքներ էին արտոնել իրեն: Այսպիսի մտածելակերպով նա երբեք չէր կարողանալու վայելել տոնակատարությունը: Այս վերաբերմունքը սպանում է տոնակատարության և երկրպագության հոգին: Հայրը խոսում էր շնորհքի լեզվով: Նա խուսափում էր պայմանագրերի, իրավունքների և պարտականությունների լեզվով խոսելուց, փոխարենը շնորհքի ու սիրո լեզվով էր խոսում՝ ասելով. «Որդի՛ս, դու միշտ ինձ հետ ես, և ինչ որ ունեմ՝ քոնն է» (Ղուկ. 15:31): Այս տխուր որդին ինչ շահեց կամ ինչ կորցրեց՝ այդքան էլ կարևոր չէ. կարևոր է տեսնել հոր բարությունն ու առատաձեռնությունը:

Երբ հասկանանք, որ այդ ամենը կարևոր է, ուրախությամբ կմիանանք Աստծո «տոնակատարություններին» և ուրախությամբ կերկրպագենք Նրան:

Ռեքս Տիրլավ

## Ապաշխարություն առանց պայմանների

«Ես ուզում եմ փրկվել, բայց չեմ կարող», «Ես ուզում եմ Հիսուսին դառնալ, բայց այնքան դժվար է»: Երբևէ լսե՞լ եք այսպիսի արտահայտություններ: Հավանաբար դու նույնպես ասել ես նման խոսքեր: Արդյոք ուզո՞ւմ ես փրկվել, բայց մտածում ես, թե շատ դժվար է: Շատ մարդիկ իսկապես գիտեն, որ փրկվելու համար Քրիստոսի կարիքն ունեն, սակայն մտածում են, թե իրենց համար անհնար է փրկվելը:

Պատճառն այն է, որ մարդիկ կարծում են, որ նախքան փրկության համար Քրիստոսին դիմելը պետք է մաքրեն իրենք իրենց վատ սովորություններից, ծխախոտից, մոլախաղերից, անվայել խոսքերից և նման կախվածություններից: Ուստի ենթադրում են, թե չեն կարող փրկվել:

Երկու շաբաթ առաջ այդպիսի մարդու հետ էի զրուցում: Արցունքներն աչքերին ասաց, որ ուզում է փրկվել, բայց չի կարողանում դադրեցնել ծխելու սովորությունը: Թո՛ւյլ տվեք ասել ձեզ, որ փրկությունը միայն Քրիստոս Հիսուսին հանդեպ հավատքի միջոցով է: Այն ինչ-որ բան անելով կամ չանելով չէ: Անձը փրկություն է ստանում միայն Քրիստոսին հավատալով:

Տեսնո՞ւմ եք. դուք և ես չենք կարող որևէ բան անել, որպեսզի փրկվենք: Փրկվելու համար պետք է միայն հավատանք Հիսուս Քրիստոսին խաչի վրա Նրա կատարած գործի համար: Հետևաբար այն մեր գործերից կախյալ չէ: Այն մեր վատ սովորությունները դադարեցնելու միջոցով չէ: Այն լավ սովորություններ ձեռք բերելով չէ: Այն բարի մարդ լինելով չէ: Այն միայն Հիսուս Քրիստոսին հավատալով է

այն աշխատանքի համար, որ Նա մեզ համար կատարեց Գողգոթայի խաչի վրա:

Երբ բազմությունը Պետրոսին հարցրեց, թե փրկվելու համար ինչ է պետք անել, Պետրոսը պատասխանեց. «Հավատացե՛ք Հիսուս Քրիստոսին»: Երբ բանտապետը Պողոսին հարցրեց, թե փրկվելու համար ինչ պետք է անի, Պողոսը պատասխանեց. «Հավատա՛ Տեր Հիսուս Քրիստոսին»: Եթե դեռևս նույն հարցն ես տալիս, պատասխանը շատ պարզ է. «Հավատա՛ Հիսուս Քրիստոսին» և դու կփրկվես:

Ռաֆֆի Չափարյան

## *Ինչո՞ւ չենք կարող համակերպվել միմյանց հետ*

Եվ ժողովրդից մեկն ասաց նրան. «Վարդապե՛տ, իմ եղբորն ասա՛, որ ժառանգությունն ինձ հետ բաժանի» (Ղուկ. 12:13): Միջնորդելու փոխարեն Տեր Հիսուսն ասաց, որ զգույշ մնան ագահությունից: Թվում է, թե մարդու ընտանեկան ընդհարումները նրա ագահ վարմունքի հետևանքն էին: Մեկ այլ դեպքում Տեր Հիսուսը մեզ նախազգուշացնում էր, որ զերծ մնանք ուրիշներին մեղադրելուց, երբ մենք ավելի վատ սխալներ ենք գործում. «Եվ ինչո՞ւ եղբորդ աչքի միջի շյուղը տեսնում ես, բայց քո աչքի միջի գերանը չես նկատում: Կամ ինչպե՞ս կարող ես եղբորդ ասել. «Թող աչքիցդ շյուղը հանեմ. և ահա քո աչքի մեջ գերան կա»: Կեղծավո՛ր, նախ քո աչքի միջի գերա՛նը հանիր և հետո հստակ կտեսնես՝ եղբորդ աչքից շյուղը հանելու համար»» (Մատթ. 7:3-5):

Ինչո՞ւ չենք կարող համակերպվել միմյանց հետ: Պատճառները կարելի է ամփոփել այս կերպ.

**Սատանայի միջամտություն**

Աստվածաշնչում սատանան նկարագրվում է որպես ստախոս և

ստի հայր, որ ծպտվում է լույսի հրեշտակի քողի ներքո և շրջում աշխարհով՝ անհատներին գայթակղելով և զոհեր փնտրելով: Տեր Հիսուսը հստակ էր արտահայտվում սատանայի վերաբերյալ. «Նա սկզբից մարդասպան էր և ճշմարտության մեջ չմնաց, որովհետև ճըշմարտություն չկա նրանում: Երբ նա սուտ է խոսում, ինքն իրենից է խոսում, որովհետև նա ստախոս է, և ստության հայրը» (Հովհ. 8:44): Սատանան ու նրա դևերը զորեղ են, նրանք չար բանսարկուներ են, որոնց քրիստոնյաները կարող են դիմադրել Տեր Հիսուսի անունով:

## Անձնական վերաբերմունք և գործողություններ

Կատարյալ մարդիկ գոյություն չունեն, թեպետ ոմանց հետ ավելի հեշտ է շփվել, քան մյուսների: Միջանձնային լարումները հաճախ ծնունդ են առնում ու ավարտվում այնպիսի մարդկանց հետ, ում անձնական հատկանիշները, հայացքները, զգացումներն ու վարքը ընդհարում ու անվստահություն են առաջ բերում: Ամբակում մարգարեն գրում էր. «Հափշտակություն և զրկանք կա իմ առաջին, և կըռիվ է լինում, և վեճ բարձրանում» (Ամբ. 1:3):

## Լավ փոխհարաբերություններին խոչընդոտ կարող են հանդիսանալ՝

Նկատվելու, վերահսկելու կամ հեղինակություն ու դիրք ունենալու եսակենտրոն կարիքը:

Տեր Հիսուսը նկատում էր այս տեսակի մարդկանց. «Եվ այս առակն ասաց նրանց, ովքեր վստահ էին իրենց վրա, թե արդար են և ուրիշներին արհամարհում էին» (Ղուկ. 18:9): Այս առակը փարիսեցու և մաքսավորի մասին է (Ղուկ. 18:10-14):

## Ուրիշների հանդեպ չներող ու կոպիտ վերաբերմունքը

Առաքյալը գրում էր. «Միմյանց հանդեպ քա՛ղցր եղեք, գթած, իրար ներելով, ինչպես որ Աստված Քրիստոսով ձեզ ներեց» (Եփես. 4:32):

## Դատող ու կեղծավոր լինելու հակումը

Լեռան քարոզում Տեր Հիսուսը սովորեցնում էր. «Եվ Մի՛ դատեք և չեք դատվի, մի՛ դատապարտեք և չեք դատապարտվի, ներեցե՛ք ու պիտի ներվի ձեզ» (Ղուկ. 6:37):

Դոկտ. Չեսլով Բասսարա

# Խաղաղության իշխան

## Ղուկաս 2:1-15

Ղուկասի ավետարանի 2-րդ գլխում կարդում ենք, թե ինչպես հրեշտակներն ավետեցին Հիսուսի ծնունդը: «Այսօր ձեզ համար Փրկիչ ծնվեց Դավթի քաղաքում... Նրա անունը կոչվելու է Սքանչելի, Խորհրդական, Հզոր Աստված, Հավիտենական Հայր, Խաղաղության Իշխան»:

Բոլորս խաղաղություն ենք փափագում: Բայց խաղաղության Իշխանն ինչպե՞ս կկարողանա մեզ բերել այս խաղաղությունը, երբ ես և ուրիշը տարբեր նկարագրերի տեր անձեր ենք:

Հիսուսը՝ Խաղաղության Իշխանը, ներկայացնում է Աստծուն: Ինչպես թագավորն ուղարկում է իր իշխանին, որ հպատակներից տեղեկություն բերի, նույնպես էլ Հիսուսն աշխարհ եկավ՝ Աստծուց ուղարկվելով, որպեսզի մեզ բերի այդ օրհնությունները: Արդյոք ուզո՞ւմ ես ճանաչել Աստծուն: Եթե Քրիստոսի հատկությունները չգիտես, չես կարող ճանաչել Աստծուն: Ինչպես անձին ճանաչելու համար նրա հետ հաղորդակցվում ես, ժամանակ ես անցկացնում, սեղան ես նըստում՝ ճաշելու, նույնպես Հիսուսին ճանաչելու համար Նրա հետ ժամանակ անցկացնելու կարիք ունես, Նրա նկարագիրը սերտելու, հասկանալու և յուրացնելու, գործադրելու և այն անձնական կյանքիդ մի օրինակը դարձնելու անհրաժեշտություն ունես: Ուզո՞ւմ ես ճանաչել Աստծուն Հիսուսի միջոցով, ահա կերպերը.

Ա. Խաղաղություն ունենալու համար պայմաններ կան, որոնք պետք է ամբողջացնենք: Լիարժեք խաղաղություն ունենալու պայմաններից մեկը ամբողջությամբ հանձնվելն է: Ուզո՞ւմ ես, որ Քրիստոսը քո Տերը լինի, ուրեմն լիովին հանձնվի՛ր Նրան՝ վստահելով: Նա երբեք քեզ դատարկ ձեռքով, հուսախաբ կամ հուսահատ չի վերադարձնի: Ամբողջությամբ հանձնվի՛ր Նրան և կտեսնես, թե ինչպես է առաջնորդելու քեզ:

Այսօր առաջարկ կա յուրաքանչյուրիս համար՝ լինելու խաղաղության իշխան, Նրա հետևորդը, Նրա զինվորը, և առաջ գնալու: Երբ

որ սրտիդ մեջ յուրացնես այդ որևէ ժամանակ, որևէ վայրում, այդ խաղաղության աղաղակը կբխի քո շուրթերից, հոգուց: Դեմքիդ վրա ուրախություն և ժպիտ կլինի, և այդ խաղաղությունը կերգես: Երբ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ նոր Արևելքը և Արևմուտքը պայքարում էին իրար դեմ, դեկտեմբերի 25-ի ցուրտ ձըմռան գիշերը հրամանատարն ասաց. «Պետք է լուռ մնաք. Քրիստոսի ծննդյան օրն է»: Նրանք զենքերը թողեցին: Նրանց միջից մի քաջ զինվոր ոտքի կանգնեց ու երգեց. «Լուռ գիշեր, սուրբ գիշեր, ծով ու ցամաք խռով են ահա» երգը: Քիչ անց բանակի զինվորներն էլ միացան նրան: Երգն ավարտելուն պես թշնամու բանակից լսվեց «Փոքրիկ քաղաք Բեթլեհեմի, որքան լուռ ես, խաղաղ» երգը: Երբ այս երգը նույնպես ավարտվեց, այն պատնեշը, որը բաժանում էր նրանց, անմիջապես քանդվեց, և բանակները ողջագուրվեցին՝ ասելով. «Մենք եղբայրներ ենք»: Քրիստոսի ներկայությունը յուրաքանչյուրին խաղաղություն է բերում: Այսօր Նա քո սրտին խաղաղություն բերե՞լ է:

Բ. Խաղաղություն կա այնտեղ, որտեղ Հիսուսը ներկա է և ապրում է: Կազմակերպություններ և հաստատություններ օրենքներ են դնում, և եթե օրենքներին հետևես, դժվարություն չես ունենա: Երկիրն օրենք է դրել, և եթե մենք օրենքը խախտենք, պատահար կունենանք, վնաս կկրենք, և մեր մտքերը խաղաղություն չեն ունենա:

Հիսուսն ուզում է խաղաղություն տալ: Խաղաղությունն Աստծուց մեծագույն նվեր է քեզ: Հովհ. 14:27-ում ասվում է. «Խաղաղություն եմ թողնում ձեզ, Իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ. ոչ թե՝ ինչպես աշխարհն է տալիս, Ես տալիս եմ ձեզ: Ձեր սիրտը թող չխռովվի, ո՛չ էլ վախենա»: Փիլ. 4:7-ն ասում է. «Աստծո խաղաղությունը, որ ամեն հասկացողությունից վեր է, պիտի պահի ձեր սրտերն ու մտքերը Քրիստոս Հիսուսով»:

Վեր. Ջոն Մելքոնյան

Քաղված «Հատընտիր հոգևոր պատգամներ» գրքից

❋ ❋ ❋

# Ատաղձագործը

Ժամանակին երկու եղբայրներ կից ագարակներում էին ապրում: Մի օր նրանց միջև վեճ առաջացավ: Սա առաջին լուրջ ճեղքն էր քառասուն տարի կողք կողքի հողագործություն անելուց հետո, երբ փոքր անհասկացողությունը, մեծ ռումբի վերածվելով, պայթեց և ատելություն բերեց:

Ահա մի օր եղբայրներից մեկի՝ Ջոնի տան դուռը թակեցին: Երբ բացեց այն, տեսավ մի ատաղձագործի, որ կանգնել էր՝ գործիքների արկղը ձեռքին:

Մի քանի օրվա աշխատանքի կարիք ունեմ. արդյոք մանր-մունր գործեր ունե՞ք, որ կարող եմ անել:

Այո՛, - ասաց մեծ եղբայրը, - քեզ համար գործ ունեմ: Նայի՛ր այս առվակի մոտ գտնվող ագարակին: Այն պատկանում է իմ դրացուն՝ կրտսեր եղբորս: Անցած շաբաթ մի մարգագետին կար մեր միջև: Նա դիտմամբ առվակ բացեց՝ ինձ ցավ պատճառելու համար: Բայց ես ավելի լավ բան պետք է անեմ՝ ի պատասխան նրա արածին: Տեսնո՞ւմ ես այդ տախտակների դեզը: Ուզում եմ, որ ութ ոտք բարձրությամբ ցանկապատ շինես, որպեսզի այլևս չտեսնեմ նրա երեսը:

Ատաղձագործը լսելուց հետո ասաց.

- Կարծում եմ, որ հասկացա պարագան: Մեխերը տո՛ւր, և քեզ ընդունելի գործ կանեմ:

Մեծ եղբայրը անհրաժեշտ առարկաները հանձնեց և քաղաք գընաց: Վարպետը ամբողջ օրը շատ աշխատեց, չափեց, սղոցեց և մեխեց: Երբ իրիկնամուտին ագարակապանը վերադարձավ, աչքերը լայն բացվեցին, բերանը բաց մնաց: Ցանկապատ չկար, այլ մի կամուրջ, որ առվակի մի կողմից մյուսն էր ձգվում, դրացին էլ՝ կրտսեր եղբայրը, դեպի իրենց էր գալիս՝ թևերը լայն բացած:

Եզակի մարդ ես, որ այս կամուրջը կառուցեցիր պատմածներիցս հետո, - ասաց Ջոնը:

Երկու եղբայրները կամուրջի մեջտեղը միացան և իրար ձեռք սեղմեցին: Երբ հետ դարձան, տեսան ատաղձագործին, որն իր ուսին էր դնում գործիքների արկղը:

Խնդրում եմ սպասի՛ր և մի քանի օր ևս մնա՛,- ասաց մեծ եղբայրը:

Ուզում եմ մնալ, - ասաց վարպետը, - բայց շատ ուրիշ կամուրջներ ունեմ կառուցելու:

Թող Տերը օգնի մեզ, որ մեր խռովության, ատելության, նախանձի, քննադատության և վրեժխնդրության ցանկապատերը քանդվեն, և սիրո կամուրջներ կառուցենք, ներողամտության հոգով, որ Հայր Աստծուց է գալիս: Տեր Հիսուսը կսովորեցնի, և Սուրբ Հոգու օգնությամբ կկարողանանք գործադրել դա:

Քաղված՝ «Բարեպտուղ ձիթենին» գրքից

## Եկե՛ք շարունակենք

### Եբրայեցիներին 6:1-12

Աշխարհում տիրող իրավիճակները շատերի անհանգստության պատճառն են դարձել: Հազվադեպ ենք լսում այնպիսի նորություններ, որոնց մեջ չկա հեղափոխություն, պատերազմ, սպանություն, ինքնասպանություն կամ իշխանավորների կաշառակերություն երևույթները: Թվում է, թե ոչ մի երկիր զերծ չէ այս բարոյական և հոգևոր ապականվածությունից:

Ապագան շատ աղոտ ու հուսահատեցնող է թվում, բայց մենք, անկախ ամեն ինչից, պետք է շարունակենք առաջ քայլել: Մենք չենք կարող հետ դառնալ: Ինչպիսին էլ լինի մեր առջև բացվող ճանապարհը, պետք է առաջ ընթանանք: Ժամանակը նման է մի ոստիկանի, որն ասում է. «Առա՛ջ անցեք»:

Այդ ընթացքի մեջ մենք պետք է ուշադիր նայենք ճանապարհի նշաններին ու հետևենք նախազգուշացումներին: Դրանք շատ հստակ են՝ թշվառություն, կործանում և մահ: Ճիշտ ճանապարհը նույնպես հստակ է նշված՝ օրհնություն, խաղաղություն, հավիտենական կյանք և երկինք: Մենք պետք է շարունակենք առաջ քայլել, բայց համոզված լինենք, որ ճիշտ ճանապարհի վրա ենք: Պետք է վստահ լինենք, որ ուղիղ ու նեղ ճանապարհի մեջ ենք:

«Նեղ դռնո՛վ ներս մտեք, որովհետև լայն է դուռը և ընդարձակ ճանապարհը, որ դեպի կորուստ է տանում, և շատերն են նրանով գնացողները: Որքա՜ն նեղ է դուռը, և նեղվածք է ճանապարհը, որ տանում է դեպի կյանք, և քիչ են նրան գտնողները» (Մատթ. 7:13-14):

Թեև ժամանակը կարճ է, սակայն պետք է զգույշ և դանդաղ շարժվենք: Ավելի լավ է չսայթաքենք, քան ընկնելուց հետո նորից վեր կենանք (իհարկե ավելի լավ է ընկնելուց հետո նորից վեր կենալ, քան ընկած մնալ): Կան նախազգուշացնող «դեղին լույսեր», վտանգ ազդարարող «կարմիր լույսեր» և ապահովության «կանաչ լույսեր»: Տարվա ողջ ընթացքում մենք պետք է Աստծո Խոսքի լույսը՝ մեր կանաչ լույսը վառ պահենք, որպեսզի մեր ճանապարհը լուսավորվի:

Սակայն եկեք մենակ չգնանք: Եկեք ճանապարհին ընկերներ փնտրենք, փնտրենք նրանց, ովքեր մեր օգնության կարիքն ունեն: Ամեն դեպքում, եթե ամեն օր Հիսուսի հետ ենք քայլում, մենակ չենք լինի: Հույսով նայենք մեր ճանապարհի ավարտին: Քրիստոսը խոստանում է օգնել ու մխիթարել: Սուրբ ճանապարհը ուրախ ճանապարհ է:

Այսպիսով՝ ինչպե՞ս ես երկինք հասնելու: Նախ՝ շրջվի՛ր դեպի աջ, հետո՝ ուղիղ առա՛ջ գնա:

Վեր. Հովսեփ Հովսեփյան

Քաղված՝ «Աստծո արհեստանոցը» գրքից

❋ ❋ ❋

# Հացի մեջ պահած Աստվածաշունչը

- Թոռնի՛կս, եկ միասին Աստվածաշունչ կարդանք, - հարմար տեղավորվելով բազկաթոռին՝ ասում է տատիկը:

- Տատի՛կ, ինձ դուր չե՛ն գալիս այդտեղ գրված պատմությունները, ես կարծում եմ, որ այդ ամենը հորինվածք է, - վրդովված պատասխանում է թոռնիկը:

- Ինչպե՞ս կարող ես այդկերպ մտածել: Ես քեզ վստահեցնում եմ, որ այս գրքում գրված ամեն մի բառը ճշմարտություն է:

- Տատի՛կ, անցած անգամ մենք կարդացինք Սեդրակի, Միսաքի, Աբեդնագովի պատմությունը, բայց երբ ես այդ մասին պատմեցի ընկերուհիներիս, նրանք սկսեցին ծաղրել ինձ:

Եվ ես հասկացա, որ մարդ չի կարող ընկնել կրակի հնոցի մեջ և ողջ մնալ. դա պարզապես հեքիաթ է:

Տատիկը հասկանալով, որ թոռնիկին իրական ապացույցներ են պետք, ասում է.

- Իսկ ի՞նչ կասես, եթե ես քեզ մի պատմություն պատմեմ իմ կյանքից:

- Ա՛յ դա մեծ հաճույքով կլսեմ, - ասում է թոռնիկը և տեղավորվում տատիկի կողքին:

- Հին ժամանակներում, երբ անգամ հայրդ լույս աշխարհ չէր եկել, մենք ապրում էինք շատ ծանր պայմաններում: Բացի այն, որ ապրելու պայմաններն էին սուղ, մեզ նաև հալածում էին քրիստոնյա լինելու համար:

Մենք չէինք կարող բացահայտ խոսել Աստծո մասին, Աստվածաշունչ կարդալ, քանի որ կարող էինք խիստ պատժվել, անգամ սպանվել:

Մի անգամ, երբ խմոր էի պատրաստել, որպեսզի հաց թխեի, գյուղում լուրեր տարածվեցին, թե ոստիկանները շրջում են բոլոր տներով

և փնտրում Աստվածաշունչ, որպեսզի ոչնչացնեն այն և ձերբակալեն տան բնակիչներին:

Այս լսելով՝ ես խուճապի մատնվեցի, որովհետև մենք տանն ունեինք Աստվածաշունչ: Հասկացա, որ եթե պահեմ տան անկյուններում, ոստիկանները հաստատ կգտնեն: Երկար մտածելուց հետո որոշեցի Աստվածաշունչը դնել թթխմորի մեջ ու դնել վառարանը:

Դեռ նոր էի փակել վառարանի դուռը, երբ ոստիկանները ներխուժեցին և սկսեցին տակնուվրա անել մեր տունը:

Իհարկե, նրանք հիասթափված գնացին, որովհետև մտքներով էլ չանցավ, որ Աստվածաշունչը դրած կլինեի կրակի հնոցի մեջ:

Մենք ընտանիքով շատ էինք տխրել, հայրս անգամ մեղավոր էր զգում իրեն, որ հալածանքից խուսափելու համար զոհել է Աստվածաշունչը:

Հիշում եմ, որ արցունքն աչքերիս՝ բացեցի վառարանի դուռը և հանեցի այնտեղից հացերը:

Հայրս անմիջապես վերցրեց այն հացը, որի մեջ Աստվածաշունչն էր և մի քանի րոպե անց այնպես բղավեց, որ մենք սարսափահար եղանք:

Աստվածաշունչն ամբողջապես անվնաս էր մնացել: Այնպիսի տպավորություն էր, կարծես ես այն թաքցրել էի գրապահարանում:

- Տատիկ, Աստվածաշունչն անվնաս էր մնացել, ինչպես Սեդրակը, Միսաքը և Աբեդնագո՞վը:

- Այո՛, փոքրիկս, լիովին անվնաս:

- Տատիկ, ինչ վատ բան ստացվեց, ի՞նչ ես կարծում՝ ես իմ անհավատությամբ նեղացրել եմ Աստծուն: Ես ինձ այնքան մեղավոր եմ զգում, որ կարծել եմ, թե Աստվածաշունչը հեքիաթների գիրք է:

- Մի՛ վհատվիր, կարևորը, որ հասկացար սխալդ: Իսկ ահա երեկոյան, երբ կպառկես քնելու, ներողությո՛ւն խնդրիր Աստծուց, և Նա անպայման քեզ կների: